



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ**

**WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆ ՀՕՐ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ՊԱՏԳԱՄԸ

**ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ
ՅԱՂԹԱՆԱԿՆ Է ԲԱՐԻՒՆ**

Եօթը շաբաթներ առաջ, թեւակոխեցինք Մեծ Պահոց հոգեւոր ճանապարհորդութիւնը. անիկա պահեցողութեան ու ինքնամփոփման շրջան մըն էր, որ մեզ հոգեպէս պատրաստեց Քրիստոնեայ աշխարհի ամենէն կարեւոր տօնին՝ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Ս. Յարութեան, որ Չարին պարտութիւնս է եւ Բարին յաղթանակը:

Մեծ Պահոց շաբաթները բոլորիս ընծայեցին խոկումի, ապաշխարութեան եւ հոգեւոր վերանորոգումի պահեր: Ձերմեռանդ ոգիով հետեւեցանք պահեցողութեան եւ ահա, ցնծութեամբ կը տօնակատարենք յաւիտենական կեանքի խոստումը, որ մեզի շնորհուեցաւ մեր Փրկչին Ս. Յարութեամբ: Արդարեւ, անելի քան 2000 տարիներ առաջ հրեշտակը մարդկութեան անտեց հրաշալի ճշմարտութիւնը, թէ՛ Քրիստոս մեռելներէն յարութիւն առաւ: Այդ անտիսը այսօր ալ կը շարունակէ արձագանգել աշխարհի տարածքին, մեր սրտերը լեցնելով ցնծութեամբ եւ յոյսով:

Հրաշալի Յարութենէն 33 տարիներ առաջ, Աստուած իր Միածին Որդին աշխարհ ղրկած էր, որպէսզի կրէր մարդկութեան տառապանքը, մարդը թօթափէր իր մեղքերը եւ փրկուէր չարէն: Ս. Յարութեան տօնը թագադրումն է Աստուածորդոյն երկրաւոր առաքելութեան: Հրաշափառ Ս. Յարութեան ճանապարհը կը սկսի Քրիստոսի Երուսաղէմ յաղթական մուտքով: Աւագ շաբթուան ընթացքին հաղորդակից կ'ըլլանք Քրիստոսի երկրաւոր կեանքի վերջին շաբթուան իրադարձութեանց, խաչելութեան յիշատակման, որ փրկագործութեան խորհուրդին գագաթնակէտն է եւ մարդուն հանդէպ աստուածային սիրոյն գերագոյն արտայայտութիւնը:

Խաչելութենէն երեք օր ետք, Քրիստոսի հետեւորդները այցի գացին անոր գերեզմանին, որպէսզի գվյն օծեն, սակայն մեծ եղաւ անոնց զարմանքը, երբ թաղեալը չգտան գերեզմանին մէջ: Տիրոջ հրեշտակը զանոնք դիմաւորեց ըսելով. **«Մի՛ վախ՛նաք. գիտեմ որ խաչուած Նազովրեցի Յիսուսը կը փնտռէք, բայց հոս չէ՛, յարութիւն առաւ»** (Մարկ. 16:6): Պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, մահը վախճան մը չէր, այլ Քրիստոսի անցքը դէպի Փառք: Աստուծոյ սերը այնքան հզօր է, որ մինչեւ իսկ մահը անզօր է պարտութեան մատնելու զայն: Ճշմարտութիւնը չի կրնար

խափանուիլ: Անիկա նաեւ հաւատքի ու Տիրոջ անսպառ ողորմութեան մեծագոյն արտայայտութիւնն է:

Յարութեամբ տրուած յաւիտենական կեանքի պարգեւին խոստումը գեղեցկօրէն արտայայտուած է Յովհաննէս անետարանիչին կողմէ. **«Լաւ գիտցէք, ով որ իմ խօսքս կը լսէ եւ կը հաւատայ անոր՝ որ զիս դրկեց, յաւիտենական կեանքը ունի եւ պիտի չդատապարտուի, որովհետեւ արդէն իսկ մահէն կեանքի անցած է»** (Յովհ. 5:24): Մեր Տէրը՝ Յիսուս Զրիստոս յաղթեց մահուան, յարութիւն առաւ, որպէսզի մեզի տայ յոյսը, իսկ իր երկրորդ գալուստէն առաջ առյաւետ ննջողներուն տայ միախորութիւն: Այս յոյսը արտայայտութիւն գտած է Ս. Պօղոս առաքեալի կողմէ Թեսաղոնիկեցիներուն ուղղուած առաջին նամակին մէջ. առաքեալը սգաւորները կը միախորե վստահեցնելով, որ անոնց սիրելիները մեռած չեն, այլ առժամեայ նինջի մէջ են, որովհետեւ իր երկրորդ գալուստէն՝ Տէրը իրեն հաւատացողները իր հետ պիտի ունենայ: **«Եղբայրներ, կ'ուզենք որ մեռածներուն մասին ճշմարտութիւնը գիտնաք, որպէսզի չտրտմիք ուրիշներուն պէս, որոնք որեւէ յոյս չունին: Որովհետեւ, եթէ կը հաւատանք, թէ Յիսուս մեռաւ եւ յարութիւն առաւ, նոյնպէս ալ կը հաւատանք՝ թէ Աստուած Յիսուսի ձեռքով եւ անոր հետ վերստին կեանքի պիտի բերէ անոնք՝ որ անոր հաւատացին եւ մեռան»** (Ա. Թես. 4:13-14): Յիսուս կը բնակի իւրաքանչիւր հաւատացեալի սրտին մէջ. անոր հանդէպ ամբողջական հաւատք ունենալով, ու զայն ընդունելով իբրեւ մեր միակ Տէրն ու Փրկիչը՝ մենք եւս պիտի յաղթանակենք մահուան եւ բաժնեկից պիտի ըլլանք իր փառքին:

Մարդը մեղաւոր արարած է. ան յաճախ կ'անցնի անյուսութեան ու յուսալքումի հանգրուաններէ: Սակայն երբեք պետք չէ մոռնանք, որ մեր Տէրը՝ Յիսուս Զրիստոս, մեզի շնորհած է խաւարը զգետնելու կարողութիւնն ու յաւիտենական կեանք ժառանգելու խոստումը: Ս. Յարութիւնը հաւատացեալները ազատագրեց մեղքի յաւիտենական կապանքներէն: Մենք եւս, իբրեւ հաւատացեալ քրիստոնեաներ, միջոցը ունինք յաղթահարելու խաւարը եւ անկէ դուրս գալու դէպի լոյս, դէպի այն միակ Լոյսը, որ Յիսուս Զրիստոս Ի՛նք է: Դէպի աստուածահաճոյ կեանք ընթացող մեր կեանքի ճանապարհորդութեան իւրաքանչիւր հանգրուանը նա՛եւ մեր սեփական յարութեան հանգրուանն է, ուր դէմ յանդիման պիտի գտնուինք զանազան մարտահրաւերներու, պիտի կրենք տառապանքներ, որոնցմէ անդին անցնելով՝ մենք եւս արժանի պիտի ըլլանք խոստացուած փառքին, այնքան ատեն որ կը հաւատանք:

Սիրելի հաւատացեալներ,

Բարիին յաղթանակը իւրաքանչիւրիս համար կեանքի իրողութիւնն է: Մահը պարտութեան մատնելով՝ Զրիստոս յուսալքուածներուն տուաւ յոյսի պատգամը, տազնապահարին տուաւ խաղաղութեան շնորհքը, նաեւ՝ նոր կեանքի խոստումն ու իր ճամբով թողութեան արժանանալու բերկրանքը:

Ս. Չատկուան տօնական այս օրերուն, գոհութիւն եւ փառք՝ Աստուծոյ, որ մեզի ընծայած է մեղքին յաղթելու ու մեր հոգիներուն խաւարը զգետնելու պատեհութիւնը:

Եկե՛ք, ցնծանք Քրիստոսի հրաշափառ Յարութեամբ ու մեր կեանքը առաջնորդենք իր մշտական ներկայութեամբ:

Եկե՛ք, մի՛շտ յիշենք իր փրկագործական սիրոյն տարողութիւնը եւ մեր փրկութեան ի խնդիր իր յանձն առած տառապանքին ծանրութիւնը:

Կ'աղօթեմ, որ մեզմէ իւրաքանչիւրը յարատեւօրէն վերարժեւորումի ենթարկէ ինքզինք, որպէսզի վերանորոգուինք մեր հաւատքին մէջ, եւ շարունակենք մեր աստուածահաճոյ կեանքը՝ վերանորոգ յանձնառութեամբ յառաջ տանելով մեր անհատական ու հաւաքական կեանքերուն բարելաւման երթը:

Ս. Յարութեան բերկրալի ու յաղթական այս տօսին, որդիական սիրով կ'ողջունենք Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը, մաղթելով օրինալից տարիներ, որպէսզի դէպի նոր բարձունքներ առաջնորդէ մեր եկեղեցին ու մեր հաւատացեալ ժողովուրդը: Մեր բարեմաղթութիւնները՝ հայրենի ղեկավարութեան, աղօթելով, որ Տէրը հովանի ըլլայ Յայաստանի ու Արցախի ժողովուրդը առաջնորդելու առաքելութեան մէջ, որպէսզի անոնք իրենց սահմանադրական իշխանութիւնը կիրարկեն ճակատաբաց ու պատիւով:

Թող Տէրը օրինէ մեր հոգեւորականաց դասը, Ազգային Վարչութիւնը, Ազգային Առաջնորդարանիս հովանիին տակ գործող մարմինները, ծխական շրջաններու նուիրեալները, մեր դաստիարակները, գործակից կազմակերպութիւնները, բարերարներն ու բարեկամները, անոնց շնորհելով քաջառողջութիւն, բարգաւաճում եւ ազնիւ ծառայութիւն՝ մեր կրօնական ու ազգային հարստութեանց ու ժառանգութեանց պահպանման, անոնց հարստացման գործի անդաստաններուն մէջ, միշտ առաջնորդուելով Բարիին յաղթանակող ոգիով:

Եկե՛ք, այս ոգիով Ս. Յարութեան տօսին զիրար շնորհաւորենք եւ միասնաբար գոչենք.

**Քրիստոս յարեալ ի մեռելոց,
Օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի**

Աղօթարար՝

Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Առաջնորդ
Ա. Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի

Ս. Յարութիւն, 2008

PRELATE'S EASTER MESSAGE

THE RESURRECTION OF CHRIST: THE ULTIMATE TRIUMPH OF GOOD

Seven weeks ago we embarked on a spiritual journey; it was a time of fasting and introspection but more importantly it was a spiritual preparation for what is undeniably the most important Feast for Christendom, the Glorious Resurrection of our Lord Jesus Christ and the ultimate triumph of good over evil.

The past few weeks offered a unique opportunity for reflection, repentance, and ultimately renewal. We devoutly observed Great Lent and now join together to celebrate the promise of eternal life granted to us by the Resurrection of our Savior. Over two thousand years ago an angel appeared to proclaim the glorious truth that Christ is risen from the dead, which still echoes throughout the universe today, just as it did at the first Easter, and fills our hearts with joy and hope.

Thirty-three years earlier God had sent His Only Begotten Son to take on the suffering of mankind so that He may deliver mankind from sin and redeem him from evil. The Resurrection we celebrate each year is the culmination of the earthly ministry of our Lord Jesus Christ. The path to the miraculous Resurrection began one week earlier with His triumphant entry into Jerusalem. Throughout Holy Week we relive the events of the last week of the earthly life of Jesus Christ, including the solemn commemoration of His crucifixion, which was the epitome of salvation and the greatest demonstration of the love of God towards mankind.

On the third day the followers of Jesus Christ went to His tomb to anoint Him but were astonished to find that He was not there. Instead they were greeted by an angel who said to them, ***“Do not be alarmed. You seek Jesus of Nazareth, who was crucified. He is risen. He is not here”*** (Mark 16:6). For the first time in history death was not an end but rather a passage of Christ into His glory. God’s love was and is so powerful that nothing, not even death, can defeat it. The Resurrection is God demonstrating to us that the truth cannot be destroyed. It is also the greatest illustration of faith and the abundant mercy of our Lord.

The gift of eternal life promised to us by the Resurrection is recorded by the Apostle John in his Gospel. ***“Most assuredly, I say to you, he who hears My word and believes in Him who sent Me has everlasting life, and shall not come***

into judgment, but has passed from death into life" (John 5:24). Our Lord Jesus conquered death and rose again to give hope and comfort to those who die before His Second Coming. This hope is conveyed by the first epistle of St. Paul to the Thessalonians in which he comforts mourners by assuring them that their loved ones are not dead but rather in temporary repose, for upon the Second Coming of our Lord He will take His people to be with Him. ***"But I do not want you to be ignorant, brethren, concerning those who have fallen asleep, lest you sorrow as others who have no hope. For if we believe that Jesus died and rose again, even so God will bring with Him those who sleep in Jesus"*** (1 Thessalonians 4:13-14). Jesus Christ lives in the heart of every believer and by placing our utmost trust in Him and by believing in Him as our one and only Savior we too will overcome death and share in His glory.

Man is a sinful being and experiences periods of despair; however we must remember that our Lord Jesus Christ has given us the ability to overcome the darkness and the opportunity to achieve eternal life. The Resurrection freed believers from the eternal binds of sin. As faithful Christians, we have the chance to triumph and rise out of the darkness into the light, the one true Light that is Jesus Christ. Each stage of our spiritual journey towards a God-pleasing life is our own individual resurrection and although at each stage we will most certainly face challenges and endure suffering we too can persevere and receive the Glory of God if we believe.

Dear Faithful,

The triumph of good over evil is a reality in each of our lives. Jesus Christ conquered death and gave us the message of hope within despair and peace within conflict, the promise of a new life, and of redemption through Him.

During our Easter celebrations let us thank Almighty God for granting us this blessed gift of the ability to defeat sin, and for the opportunity of our spirits to triumph over darkness.

Let us rejoice in the Resurrection of Christ and His everlasting presence in our lives. Let us always remember the extent of His sacrificial love for us and the suffering He endured for our salvation.

I pray that each and every one of us constantly reevaluates ourselves so that we may be restored and renewed in our faith and continue in our God-pleasing endeavors with determination and resolve for the betterment of our individual and collective lives.

On this joyous occasion I extend my filial love to our Pontiff His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia, wishing him many more years filled with God's abundant blessings so that he may continue to lead our church and our faithful to new heights. I extend my greetings to the leadership of

Armenia and Artsakh, praying that the Lord guide them in the duties entrusted to them so that they may continue to govern our brethren with dignity and honor.

May Almighty God bless our clergy, Executive Council and committee members, delegates, parishes, educators, sister organizations, sponsors, and friends, granting them health and prosperity in their noble service in the preserving and promoting of our religious and national treasures and heritage. May they be guided always by the triumphant spirit of Good.

Let us unite with these sentiments and joyously proclaim,

“Christ is risen from the dead”
“Blessed is the Resurrection of Christ”

Prayerfully,

Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Western United States

Easter 2008